



EASTERN PARTNERSHIP  
CIVIL SOCIETY FORUM



Funded by  
the European Union

**Նպաստել Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի  
Հանրապետությունների միջև անվտանգ խմելու ջրի հավասար  
հասանելիության վերաբերյալ փորձի և լավագույն գործելակերպի  
փոխանակմանը՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին»  
արձանագրության շրջանակում**

\*\*\*

**Անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հավասար  
հասանելիությունը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում**



Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար բացառապես պատասխանատվություն են կրում «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ի խորհրդատուները՝ Մոլդովայի «Դնեստր գետի պահպաններ - Էկո-SIՐԱՍ», Վրաստանի «Բնապահպանական հետազոտությունների միջազգային կենտրոն» (IFCER) կազմակերպությունների հետ համագործակցությամբ, և պարտադիր չէ, այն որ արտահայտի Եվրամիության տեսակետները:

*«Ծրագիրն օգտվում է աջակցությունից՝ ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի (FSTP) անդամներին Վերաֆինանսավորման ծրագրի միջոցով և ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ որպես տարածաշրջանի քաղաքացիական հասարակությանն իր աջակցության մաս: Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումն (ԱլԳ ՔՀՖ) իր Վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում աջակցում է իր անդամների նախագծերին, որոնք նպաստում են ֆորումի առաքելության և նպատակների իրականացմանը:*

*Դրամաշնորհները հասանելի են Արևելյան գործընկերության և ԵՄ երկրների ՔՀԿ-ների համար: Աջակցության հիմնական ոլորտներն են ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, տնտեսական ինտեգրումը, շրջակա միջավայրը և էներգետիկան, մարդկանց միջև շփումները, սոցիալական և աշխատանքային քաղաքականությունները»:*

## **Համառոտ ներածություն**

Ծրագրի նպատակն է ամրապնդել տարածաշրջանային հարթությունը և համագործակցությունը՝ ԱլԳ 3 երկրում (Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի Հանրապետություններ) ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործում տեղեկատվության հավաքագրման ու տարածման և փորձի փոխանակման միջոցով՝ 1992 թ.-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից ՄԱԿ-ի ԵՏՀ-ի/ԱՀԿ-ի «Ջրի և առողջության մասին» Արձանագրության շրջանակում: Ծրագիրը ղեկավարում է ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ն՝ համագործակցելով «Էկո-SԻՐԱՍ» և IFCER կազմակերպությունների հետ, ընդ որում, երկրներից մեկը (Մոլդովա) Արձանագրության կողմ է և ունի ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր, մյուս երկիրը (Վրաստան) Արձանագրության կողմ չէ և ունի Ասոցացման համաձայնագիր ԵՄ-ի հետ, և երրորդ երկիրը (Հայաստան) Արձանագրության կողմ չէ և ԵՄ-ի հետ ունի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀՀԳՀ):

Ծրագրի գործընկերների կողմից իրականացվել են թեմատիկ հետազոտություններ՝ Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ: Այս թեմատիկ հետազոտությունների հիմնական նպատակն էր վերլուծել Հայաստանի չսպասարկվող գյուղական բնակավայրերում անվտանգ խմելու ջրի հավասար հասանելիության խնդիրները, ուսումնասիրել Վրաստանի Բորժոմիի քաղաքապետարանի առողջարաններում առկա խնդիրները և նկարագրել Արձանագրության կողմ դառնալուց հետո Մոլդովայի ձեռք բերած առաջընթացը:

Սույն թեմատիկ հետազոտությունները ներառում են գործող իրավական շրջանակների, ինստիտուցիոնալ մեխանիզմների, «Ջրի և առողջության մասին» Արձանագրության ներքո իրականացված ծրագրերի վերլուծությունը և խմելու ջրի և ջրահեռացման ոլորտների իրավիճակը ծրագրային երկրներում:

## **Մոլդովա**

Երկիրն ի սկզբանե ստորագրել և վավերացրել է «Ջրի և առողջության մասին» Արձանագրությունը՝ նկատի ունենալով խմելու ջրի և ջրահեռացման հասանելիությանն առնչվող սուր խնդիրները, հատկապես՝ գյուղական վայրերում, հնացած կոյուղիների վերակառուցման անհրաժեշտությունը որպես երկրի համար առաջնային անհրաժեշտություն:

Բացահայտված առաջնահերթ խնդիրը ստորգետնյա աղբյուրներից և գյուղական բնակավայրերի ջրատարներից խմելու ջրի որակի անհամապատասխանության բարձր մակարդակն է, ինչը վտանգ է ներկայացնում բնակչության առողջության համար:

Բացահայտված խնդիրներից ամենաեականը դանդաղ առաջընթացն է և քաղաքային և գյուղական բնակչության միջև առկա մեծ անհամապատասխանությունն անվտանգ կառավարվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հասանելիության հարցում:

Միջազգային համագործակցությանն ակտիվ ներգրավվածությունը թույլ է տվել մշակել և սահմանել Արձանագրության ոլորտում ազգային թիրախներն ու նպատակային ժամկետները և սկսել իրավիճակը բարելավելու միջոցառումները: Միջազգային աջակցության շնորհիվ մշակվել է Արձանագրության իրականացման կառավարական ծրագիրը Գործողությունների ծրագրով, սկզբում 2016-2025 թվականների, իսկ հետագայում մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածի համար՝ գործողությունների առաջնահերթությունը սահմանելու և ներքին և արտաքին ֆինանսական աղբյուրները դրա իրականացմանն ուղղորդելու համար:

Մոլդովայի Հանրապետությունում 2016-2025 թվականների համար «Ջրի և առողջության մասին» Արձանագրության իրականացման վերաբերյալ ազգային ծրագիրը հիմնական փաստաթուղթն է միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական գործողություններ ծրագրելու համար՝ մինչև 2025թ.-ն Արձանագրությամբ Մոլդովայի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համաձայն նպատակային ցուցանիշներին հասնելու համար: Դրա իրականացումն ազգային առաջնահերթություն է, որն ազդում է կյանքի որակի և անուղղակիորեն՝ բնակչության առողջության վիճակի բարելավման վրա:

Որպես ծրագրի իրականացման ռիսկեր բացահայտվել են միջոցառումների իրականացման համար տարածքներում ինստիտուցիոնալ կարողությունների անբավարարությունը, իրականացման համար պատասխանատու որոշ դերակատարների անբավարար ներգրավվածությունը, չընդգրկված ոլորտներում ֆինանսական ռեսուրսների բացահայտումը, ջրային ռեսուրսների կախվածությունը կլիմայի փոփոխությունից:

Համեմատաբար ցածր եկամուտ ունեցող երկրի հստակ արտահայտված քաղաքական կամքը թույլ է տալիս ներգրավել միջազգային ֆինանսական աղբյուրներ՝ որակյալ խմելու ջրի և ջրահեռացման հասանելիության խնդիրները լուծելու համար:

## **Հայաստան**

Հայաստանում իրականացված թեմատիկ հետազոտության հիմնական նպատակն է վերլուծել Հայաստանի չսպասարկվող գյուղական բնակավայրերում անվտանգ խմելու ջրի հավասար հասանելիության խնդիրները: 2017 թ.-ի հունվարի 1-ից ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններն իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն: 1002 բնակավայրից շուրջ 579 գյուղական բնակավայր ապահովված չեն կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններով և ընդգրկված չեն ջրամատակարարման ընկերությունների սպասարկման տարածքում: Նշված բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է գյուղապետարանների կողմից:

Սույն թեմատիկ հետազոտությունը ներառում է գործող օրենսդրական շրջանակների, երկրի ինստիտուցիոնալ մեխանիզմների և Հայաստանի Հանրապետության խմելու ջրի և ջրահեռացման ոլորտում իրավիճակի վերլուծությունը, ներկայիս սակագնային քաղաքականությունը, իրավիճակը թիրախային գյուղերում և առկա խնդիրների լուծման համար առաջարկությունները:

Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման, ջրամատակարարման, ջրահեռացման և առողջության հետ կապված հարցերը կիսվում են քաղաքականության տարբեր ոլորտների միջև և պահանջում են սերտ համագործակցություն տարբեր մարմինների միջև ինչպես քաղաքականության, այնպես էլ կառավարման մակարդակներում: Այնուամենայնիվ, Հայաստանում շահագրգիռ կողմերը լիովին տեղյակ չեն ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության իրավիճակի մասին և չունեն բավարար կարողություններ՝ արձագանքելու խմելու ջրի և ջրահեռացման հասանելիության մարտահրավերներին:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի լուրջ մարտահրավերներից է 1002 բնակավայրից 579 ինքնասպասարկվող գյուղական բնակավայրի խմելու ջրամատակարարման խնդիրն լուծում գտնելը: Աշխարհագրական դիրքի պատճառով հավասար հասանելիության հարցերը բազմիցս քննարկվել են և գտնվում են ուշադրության կենտրոնում, սակայն խնդիրների լուծման աշխատանքները դանդաղ են ընթանում:

Վերլուծությունը բացահայտեց այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ջրային անվտանգությունը, շարքից դուրս եկած խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, համակարգի էլեկտրաէներգիայի ծախսերի ավելացումը և, հետևաբար, սպասարկման ծախսերի ավելացումը, ջրի առկայությունը, ջրի որակը, համակարգերի ոչ պատշաճ կառավարումը և այլն:

Անապահով սպառողների, մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության ապահովման մեխանիզմների ստեղծումը ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման առումով, ինչպես նաև սուբսիդավորման կարգը կմշակվի մինչև 2025թ.-ի մայիս ամիսը:

## **Վրաստան**

Վրաստանում անվտանգ խմելու ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն. Ջրհորերի գույքագրում և մշտադիտարկում Վրաստանի Բորժոմիի քաղաքապետարանի հանգստավայրերում՝ Ախալդաբա, Քվիբիսի և Ջանավի

Ծրագրի իրականացումը Վրաստանում վերահսկել են Գրիգոլ Աբրամիան, Գեորգի Չամուկաշվիլին և ջրային պաշարների հարցերով մասնագետ Ալեքսանդր Մինդորաշվիլին:

Խնդիրների, Բորժոմիի քաղաքապետարանի խմելու ջրի մատակարարման և հիմնական մարտահրավերների վերաբերյալ վերլուծությունը տրված է թեմատիկ հետազոտության մեջ:

Ջրհորերի գույքագրման և մշտադիտարկման գործընթացն իրականացվել է հորերի ջրի և սանիտարական վիճակի, ներառյալ անվտանգ խմելու ջրի վերաբերյալ գիտելիքների ծավալի գնահատումից հետո:

2023 թ.-ի սեպտեմբերի 21-ին ICFER-ի լաբորատորիան տրամադրել է խմելու ջրի տեղական հորերի գույքագրման տեխնիկական և քիմիական գնահատումները: Արդյունքները արդարացրել են սպասելիքները:

Գ. Էլիավայի անվան Բակտերիոֆագերի, մանրէաբանության և վիրուսաբանության ինստիտուտի ([www.eliava-institute.org](http://www.eliava-institute.org)) Մանրէաբանական էկոլոգիայի լաբորատորիան հետազոտել է 5 ջրհորից վերցված ջրի նմուշները:

Ստացված արդյունքների համաձայն, ամենաաղտոտված նմուշները եղել են Քվիբիս 1 և Քվիբիս 2 ջրհորերից նմուշառվածները, չափավոր աղտոտվածները՝ Ախալդաբա 2-ից, ավելի պակաս աղտոտվածները՝ Ջենավիից և գործնականում մաքուրը՝ Ախալդաբա 1-ից վերցված նմուշները:

Աղիքային հիվանդությունների տարածման ժամանակ կանխարգելիչ նկատառումներով խորհուրդ է տրվում օգտագործել Intesti Bacteriophage-ի օրինական ճանաչված բժշկական պատրաստուկը՝ այդ պատրաստուկը լցնելով հորերի մեջ:

Ֆազային բուժման առավել նկատելի արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ավելի մանրակրկիտ հետազոտություն՝ հայտնաբերելու համար ջրհորերի ջուրն աղտոտող հիմնական բակտերիաները, որպեսզի համապատասխան գործողություններ ձեռնարկվեն: